



ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԱՏՈՒԳՈՒՄ

2023

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆԱՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՝ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեսությունների դատարկ մասերը կարող եք օգտագործել սեազրության համար:


1 Նյութական կետը հավասարաչափ պտտվում է շրջանագծով: Որքա՞ն է կես պարբերության ընթացքում նրա անցած ճանապարհի հարաբերությունը տեղափոխության մոդուլին:

- 1) 0
- 2) $\pi/2$
- 3) π
- 4) 2π

2 Հորիզոնի նկատմամբ ի՞նչ անկյան տակ են նետել մարմինը, եթե քոիչքի ամենաբարձր կետում նրա պոտենցիալ և կինետիկ էներգիաները հավասար են: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) 15°
- 2) 30°
- 3) 45°
- 4) 60°

3 R շառավղով գունդը, առանց սահքի զլորվելով հորիզոնական մակերևույթի վրա, տեղափոխվում է հաստատուն v_0 արագությամբ: Որքա՞ն է մակերևույթի հետ գնդի հպման A կետի ակնթարթանին արագությունը:



- 1) $2v_0$
- 2) v_0
- 3) $v_0/2$
- 4) 0

4 Վերելակը a արագացմամբ հավասարաչափ դանդաղող շարժում կատարելով իջնում է ներքեւ: Որքա՞ն է այդ դեպքում վերելակում գտնվող m զանգվածեռվուղինորի կշիռը:

- 1) $P = m(g + a)$
- 2) $P = m(g - a)$
- 3) $P = mg$
- 4) $P = 0$

5 Թեք հարթության վրա դադարի վիճակում գտնվում է փայտե չորսուն: Ինչպե՞ս կփոխվեն չորսուի վրա ազդող դադարի շփման ուժը և շփման գործակիցը, եթե հարթության թեքության անկյունը փորքանակ:

- 1) դադարի շփման ուժը կմեծանա, շփման գործակիցը կմնա նույնը
- 2) դադարի շփման ուժը կփոքրանա, շփման գործակիցը կմնա նույնը
- 3) դադարի շփման ուժը և շփման գործակիցը կմնան նույնը
- 4) դադարի շփման ուժը և շփման գործակիցը կփոքրանան

6

V ծավալով և ρ խտությամբ չորսուն լողում է ջրով լցված անոթում: Զրի խտությունը ρ_0 է: Ինչի՞ է հավասար չորսուն հեղուկի մեջ լրիվ խորասուզելու համար պահանջվող նվազագույն ուժը:

- 1) ρgV
- 2) $\rho_0 gV$
- 3) $gV(\rho - \rho_0)$
- 4) $gV(\rho_0 - \rho)$

7

m և $2m$ զանգվածներով երկու մարմիններ համապատասխանաբար $2v$ և v արագություններով շարժվում են իրար ընդառաջ: Որքա՞ն է մարմինների համակարգի ընդհանուր իմպուլսը:

- 1) $4mv$
- 2) $2mv$
- 3) mv
- 4) 0

8

1 երկարությամբ թելից կախված գնդիկը թելի հետ միասին բերում են հորիզոնական դիրքի և բաց են թողնում: Ուղղաձիգի նկատմամբ թելի ի՞նչ անկյան դեպքում գնդիկի կինետիկ էներգիան հավասար կլինի լրիվ մեխանիկական էներգիայի կեսին: Օդի դիմադրությունն անտեսել: Որպես պոտենցիալ էներգիայի գրոյական մակարդակ ընդունել գնդիկի հավասարակշռության դիրքով անցնող հորիզոնականը:

- 1) 60^0
- 2) 45^0
- 3) 30^0
- 4) 15^0

9

Ինչպես կիրավի մաթեմատիկական ճռճանակի ներդաշնակ տատանումների պարբերությունը, եթե բերի զանգվածը 4 անգամ մեծացնենք:


- 1) կմեծանա 4 անգամ
- 2) կմեծանա 2 անգամ
- 3) կփոքրանա 2 անգամ
- 4) չի փոխվի

10 V ծավալով անոթում գտնվող իդեալական գազի մոլերի թիվը և է, Ավոգադրոյի հաստատունը՝ N_{A} : Ի՞նչի՞ է հավասար գազի մոլեկուլների կոնցենտրացիան:

- 1) $\frac{N_{\text{A}}}{Vv}$
- 2) $\frac{Vv}{N_{\text{A}}}$
- 3) $\frac{V}{vN_{\text{A}}}$
- 4) $\frac{vN_{\text{A}}}{V}$

11 Ի՞նչպե՞ս է փոխվում հաստատուն գանգվածով իդեալական գազի ջերմաստիճանը 1 վիճակից 2 վիճակի անցնելիս:

- 1) աճում է
- 2) նվազում է
- 3) չի փոխվում
- 4) կարող է աճել կամ նվազել




12 Հաստատուն գանգվածով իդեալական գազի ճնշումն ուղիղ համեմատական է գազի ծավալին: Ի՞նչպե՞ս կփոխվի գազի ջերմաստիճանը նրա ծավալը երկու անգամ մեծացնելիս:

- 1) կմեծանա 8 անգամ
- 2) կմեծանա 4 անգամ
- 3) կմեծանա 2 անգամ
- 4) կփոքրանա 2 անգամ

13 Նկարում պատկերված է իդեալական գազի վիճակի փոփոխման շրջանային պրոցես: Այդ պրոցեսի ո՞ր հատվածում է ներքին էներգիայի փոփոխությունը հավասար գազի ստացած էներգիային:

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4



14 Հաստատուն գանգվածով իդեալական գազի ճնշումն աճում է, իսկ ջերմաստիճանը՝ նվազում: Ի՞նչպե՞ս է փոխվում նրա խտությունը:

- 1) աճում է
- 2) նվազում է
- 3) մնում է նույնը
- 4) կարող է աճել կամ նվազել

15

Միևնույն զանգվածով, սակայն տարբեր նյութերից պատրաստված երկու մարմնի հաղորդում են նույն ջերմաքանակը: Ո՞ր մարմնի ջերմաստիճանն ավելի քիչ կփոխվի: Ազրեգատային վիճակը չի փոխվում:

- 1) որի ծավալն ավելի մեծ է
- 2) որի տեսակարար ջերմունակությունն ավելի մեծ է
- 3) որի տեսակարար ջերմունակությունն ավելի փոքր է
- 4) որի սկզբնական ջերմաստիճանն ավելի բարձր է


16

Փակ անորում օդի հարաբերական խոնավությունը 30 % է: Որքա՞ն կդառնա անորում օդի հարաբերական խոնավությունը, եթե հաստատուն ջերմաստիճանում նրա ծավալը մեծացնենք 2 անգամ:

- 1) 75 %
- 2) 60 %
- 3) 45 %
- 4) 15 %

17

Նկարում պատկերված են համասեռ կեկտրաստատիկ դաշտի ուժագծերը: Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ:



- 1) A կետի պոտենցիալը մեծ է B կետի պոտենցիալից
- 2) A կետի պոտենցիալը փոքր է B կետի պոտենցիալից
- 3) A և B կետերի պոտենցիալները հավասար են
- 4) A կետի պոտենցիալը կարող է մեծ կամ փոքր լինել B կետի պոտենցիալից

18

Հարթ օդային կենդենսատորը միացված է հաստատուն լարման հոսանքի աղբյուրին: Ինչպես կփոխվի կոնդենսատորի լիցքը, եթե առանց աղբյուրից անջատելու կոնդենսատորի թիթեղների հեռավորությունը մեծացնեն:

- 1) կմեծանա
- 2) կփոքրանա
- 3) կմնա նույնը
- 4) կարող է մեծանալ կամ փոքրանալ

19

Տեսակարար դիմադրության միավորն արտահայտեք ՄՀ-ի հիմնական միավորներով:

- 1) $\text{A} \cdot \text{Ա}^{-1}$
- 2) $0\text{մ} \cdot \text{մ}$
- 3) $\text{կգ} \cdot \text{մ}^2 \cdot \text{վ}^{-2}$
- 4) $\text{կգ} \cdot \text{մ}^3 \cdot \text{վ}^{-3}\text{Ա}^{-2}$

20

Յուրաքանչյուրը 1 Օմ դիմադրությամբ երեք դիմադրատարր միացված են նկարում պատկերված ձևով: Որքա՞ն է շղթայի ընդհանուր դիմադրությունը:



- 1) 1 Օմ
- 2) 1,5 Օմ
- 3) 2 Օմ
- 4) 3 Օմ

21

Հաջորդաբար միացված պղնձարջասալի լուծույթով երկու գուռերից մեկում կոնցենտրացիան ավելի մեծ է: Ո՞ր գուռում ավելի շատ պղինձ կանչատվի:

- 1) մեծ կոնցենտրացիայով գուռում
- 2) փոքր կոնցենտրացիայով գուռում
- 3) երկուսում էլ հավասար քանակությամբ պղինձ կանչատվի
- 4) բոլոր պատասխանները հնարավոր են


22

Համասեռ մագնիսական դաշտում պրոտոնը շարժվում է շրջանագծային ուղեծրով: Ինչպես սկզբու կիրավիճակի հետագծի շառավիղն ու պարբերությունը, եթե նրա արագությունը փոքրանա:

- 1) պտտման շառավիղն ու պարբերությունը կմեծանան
- 2) պտտման շառավիղն ու պարբերությունը կփոքրանան
- 3) պտտման շառավիղը կմեծանա, պարբերությունը չի փոխվի
- 4) պտտման շառավիղը կփոքրանա, պարբերությունը չի փոխվի

23

Նկարում պատկերված էլեկտրոնը շարժվում է ուղիղ, երկար հոսանքակիր հաղորդչին գուգահեռ, հոսանքի ուղղությանը հակառակ: Ինչպես սկզբու է ուղղված էլեկտրոնի վրա ազդող




Լորենցի ուժը:

- 1) դեպի վեր
- 2) դեպի վար
- 3) դիտողից դեպի նկարը
- 4) նկարից դեպի դիտողը

24

Նկարում պատկերված է կոնսուր թափանցող մագնիսական հոսքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Գրաֆիկի ո՞ր հատվածում կոնսուրում կծագի առավելագույն էլՇՈւ:


- 1)
- 2)
- 3)
- 4)



25

Լույսի S կետային աղբյուրի պատկերը հարթ հայելում ստացվում է A կետում: Ո՞ր կետում կստացվի պատկերը, եթե աղբյուրը տեղափոխվենք B կետ:

- 1) ա կետում
- 2) բ կետում
- 3) զ կետում
- 4) պատկեր չի ստացվի, քանի որ աղբյուրը հայելու դիմաց չէ



26

Մեներանգ լույսի փունջը օդից անցնում է ջրի մեջ: Ինչպես կփոխվեն լուսային ալիքի տատանման հաճախությունն ու տարածման արագությունը:

- 1) հաճախությունը չի փոխվի, արագությունը կփոքրանա
- 2) հաճախությունը չի փոխվի, արագությունը կմեծանա
- 3) հաճախությունը կմեծանա, արագությունը կփոքրանա
- 4) հաճախությունը կփոքրանա, արագությունը կմեծանա

27

Ինչպիսի՞ ոսպնյակով կարելի է ստանալ առարկայի կեղծ պատկերը:

- 1) միայն հավաքող
- 2) միայն ցրող
- 3) և հավաքող, և ցրող
- 4) և չհավաքող, և չցրող

28


Ինչպես են փոխվում վակուումում տարածվող լույսի ալիքի երկրությունն ու ֆոտոնի իմպուլսը ալիքի հաճախությունը մեծացնելիս:

- 1) ալիքի երկարությունը և ֆոտոնի իմպուլսը մեծանում են
- 2) ալիքի երկարությունը և ֆոտոնի իմպուլսը փոքրանում են
- 3) ալիքի երկարությունը փոքրանում է, ֆոտոնի իմպուլսը մեծանում է
- 4) ալիքի երկարությունը մեծանում է, ֆոտոնի իմպուլսը փոքրանում

29

Նկարում պատկերված են ֆոտոէլեկտրոնների առավելագույն կիսետիկ էներգիայի՝ ընկնող ճառագայթման հաճախությունից կախման գրաֆիկները երկու տարբեր մետաղների համար: Մետաղներից որի՝ ելքի աշխատանքն է ավելի մեծ:

- 1) I մետաղի
- 2) II մետաղի
- 3) հավասար են
- 4) պատասխանը կախված է ընկնող լույսի հաճախությունից



30

Ինչպես է փոխական ատոմի միջուկում պարունակվող պրոտոնների թիվը մեկ β տրոհման արդյունքում:

- 1) փոքրանում է 2-ով
- 2) մեծանում է 2-ով
- 3) փոքրանում է 1-ով
- 4) մեծանում է 1-ով

31


Մարմինը Երկրի մակերևույթից ուղղաձիգ վեր են նետել 5 մ/վ արագությամբ: Որքան ժամանակ անց մարմինն Երկրորդ անգամ կգտնվի Երկրի մակերևույթից 80 սմ բարձրության վրա: Օդի դիմադրությունն անտեսել: Ազատ անկման արագացումը 10 մ/վ² է: Պատասխանը բազմապատկել 10-ով:

32

Իզորար պլոցեսի ընթացքում միատում իդեալական գազը կատարել է 2000Ω աշխատանք: Որքա՞ն ջերմաքանակ է ստացել գազն այդ ընթացքում:

33

Նկարում պատկերված շղթայում $U = 60 \text{ V}$, $R = 10 \Omega$ Օմ:
Բանալին փակելիս որքա՞ն կլինի հոսանքի ուժը շղթայում:



34

Տատանողական կոնտուրում սեփական տատանումների հաճախությունը 2 կշգ է, կոճում հոսանքի ուժի առավելագույն արժեքը 5 մԱ, իսկ կոնդենսատորի առավելագույն լարումը՝ $6,28 \text{ մՎ}$: Որքա՞ն է կոճի ինդուկտիվությունը: Ընդունել $\pi = 3,14$: Պատասխանը բազմապատկել 10^4 -ով:

35

Քանի՞ ֆոտոն է առաքում $19,8 \text{ մՎտ}$ հզորությամբ լազերը 1 վ-ում, եթե ձառագայթման ալիքի երկարությունը 633 նմ է: Պլանկի հաստատունն ընդունել $6,6 \cdot 10^{-34} \text{ Ջվ}$, լույսի արագությունը վակուումում՝ $3 \cdot 10^8 \text{ մ/վ}$: Պատասխանը բազմապատկել 10^{14} -ով:

(36-37) Մնամեց գունդը լողում է $1050 \text{ կգ}/\text{մ}^3$ խտությամբ հեղուկում այնպես, որ նրա ծավալի $2/3$ մասն ընկրության մեջ է հեղուկի մեջ: Գնդի (ներառյալ խոռոչի) ամքող ծավալը 36 սմ^3 է, իսկ գնդի նյութի խտությունը՝ $2100 \text{ կգ}/\text{մ}^3$: Ազատ անկման արագացումը $10 \text{ մ}/\text{s}^2$ է:

36 Որքա՞ն է գնդի վրա ազդող արքիմեդյան ուժը: Պատասխանը բազմապատկել 10^3 -ով:

37 Որքա՞ն է գնդի խոռոչի ծավալը: Պատասխանը բազմապատկել 10^6 -ով:

(38-39) Հաստատուն զանգվածով իդեալական զազի բացարձակ շերմաստիճանը 3 անգամ մեծացնելիս նրա ճնշումը մեծացավ 50 %-ով:

38 Քանի՞ տոկոսով մեծացավ զազի ծավալը:

39 Քանի՞ անգամ փոքրացավ զազի խտությունը:

(40-41) 10^{-8} ԿԼ լիցք ունեցող 10 պֆ էլեկտրառունակությամբ մետաղե գունդը հաղորդալարով միացնում են նրանից մեծ հեռավորությամբ 30 պֆ էլեկտրառունակությամբ չիցքավորված մետաղե գնդին: Հաղորդալարի էլեկտրառունակությունը հաշվի չառնել:

40

Որքա՞ն կլինի առաջին գնդի լիցքը գնդերի միացումից հետո: Պատասխանը բազմապատկել 10^{10} -ով:

41


Որքա՞ն կլինի երկրորդ գնդի պոտենցիալը գնդերի միացումից հետո:

(42-43) Լամպի հեռավորությունը Էկրանից 5 մ է: Որպեսզի ստանան լամպի մեծացված պատկերը, լամպի և Էկրանի միջև տեղադրում են 80 սմ կիզակետային հեռավորությամբ հավաքող բարակ ոսպնյակ:

42 Լամպից ի՞նչ հեռավորությամբ է տեղադրված ոսպնյակը:

43 Որքա՞ն է լամպի պատկերի խոշորացումը:

- (44-46) Մոտորանավակը զուգահեռ ափերով գետի մի ափից անցնում է մյուսը (տես նկարը): Գետի հոսանքի և արագությունը երկու անգամ մեծ է ջրի նկատմամաբ մոտորանավակի և արագությունից: Գետի լայնությունը 20 մ է:



44 Ափին ուղղահայացի նկատմամբ $\hat{\alpha}$ անկյան տակ պետք է ուղղված լինի մոտորանավակի քթամասը, որպեսզի գետանցի ժամանակը լինի նվազագույնը:

45 α անկյան $\hat{\alpha}$ արժեքի դեպքում (արտահայտված աստիճանով) գետանցի ժամանակ հորիզենտական ուղղությամբ մոտորանավակի տեղափոխությունը կլինի նվազագույնը:

46 Որքա՞ն է գետանցի ժամանակ հորիզենտական ուղղությամբ մոտորանավակի տեղափոխության նվազագույն արժեքը: Ընդունել $\sqrt{3} = 1,7$:

(47-49) Կոնդենսատորից և ինդուկտիվության կոճից կազմված իդեալական տատանողական կոնսուլտում էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը $6,28$ մկվ է: Կոնդենսատորի լիցքի տատանումների լայնութային արժեքը $5 \cdot 10^{-9}$ Վլ է: Ժամանակի տ պահին կոճում հոսանքի ուժը 3 մԱ է: Ընդունել՝ $\pi = 3,14$:

47

Որքա՞ն է հոսանքի լայնութային արժեքը: Պատասխանը բազմապատկել 10^3 -ով:


48

Որքա՞ն է կոնդենսատորի լիցքը նշված տ պահին: Պատասխանը բազմապատկել 10^9 -ով:

49

Որքա՞ն է այդ պահին կոճի մագնիսական դաշտի և կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիաների հարաբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^4 -ով:

- (50-52) Նկարում պատկերված շղթայում կոնդենսատորի էլեկտրառումակությունը $C = 200$ մկֆ է, հոսանքի աղբյուրի ԷլՇՈՒ-ն՝ $\varepsilon = 29$ Վ, աղբյուրի ներքին դիմադրությունն անտեսել:



50

Որքա՞ն է լարման անկումը $2R$ դիմադրության վրա:


51

Որքա՞ն է կոնդենսատորի լարումը:

52

Որքա՞ն է կոնդենսատորի լիցքը: Պատասխանը բազմապատկել 10^4 -ով:

- (53-56) Միատում իդեալական գազի հետ կատարված պրոցեսը պատկերված է p - V կոորդինատային համակարգում (տես նկարը): 2-3 և 4-1 պրոցեսներն աղիարատ են, իսկ 1-2 և 3-4 պրոցեսները՝ իզոխոր:



53

Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը 2-3 պրոցեսում:

54

Որքա՞ն է գազի ստացած ջերմաքանակը 1-2 պրոցեսում:


55

Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը շրջանային պրոցեսի ընթացքում:

56

Շրջանային պրոցեսի ընթացքում շեռուցիչի ստացած շերմաքանակը քանի[՝] անգամ է մեծ սառնարանին տված շերմաքանակից: Պատասխանը բազմապատկել 10-ով:

(57-60) Հորիզոնական հարթության վրա միմյանց գուգահեռ դասավորված $l = 1$ մ հեռավորությամբ ռելսերը գտնվում են ուղղաձիգ ուղղված $B = 4$ T ինդուկցիայով մագնիսական դաշտում: Ռելսերի ձախ ծայրերը միացված են $R = 10$ Ω դիմադրությամբ հաղորդիչով: Ռելսերի վրա՝ նրանց ուղղահայաց, գտնվում է $m = 200$ g զանգվածով CD հաղորդիչ ձողը, որի վրա հորիզոնական ուղղությամբ սկսում է ազդել $F = 2$ N ուժ: Ռելսերի և ձողի դիմադրությունն, ինչպես նաև ձողի և ռելսերի միջև շփումն անտեսել:



57

Որքա՞ն է ձողի արագացումն այն պահին, երբ նրա արագությունը 1 m/s է:

- 58** Որքա՞ն է ձողի առավելագույն արագությունը: Պատասխանը բազմապատկել 10^2 -ով:
- 59** Որքա՞ն է կոնտուրում մակածված ԷլՇՈՒ-ի առավելագույն արժեքը:
- 60** Որքա՞ն է ձողի վրա ազդող Ամպերի ուժի առավելագույն արժեքը: Պատասխանը բազմապատկել 10 -ով: